ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աստղիկ Գևորգի Պողոսյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Ը.00.03. - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի հյուսիսային համալսարանում

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ճուղուրյան Արմեն Գևորգի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Սուքիասյան Սերգեյ Սպարտակի**
	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Քթոյան Արմեն Մամիկոնի**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. դեկտեմբերի 15-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. նոյեմբերի 4-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Տ. Մարտիրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ֆինանսական վերահսկողությունը հանդիսանում է բուհերի կառավարման գործառույթների անբաժանելի, անհրաժեշտ ու կարևորագույն մասը: Կատարելով հասարակության համար չափազանց կարևոր գործառույթ և ձևավորելով որակյալ մարդկային կապիտալ՝ համալսարանների մեծ մասը, պետական աջակցությանը զուգահեռ, գործունեություն է ծավալում նաև առևտրային սկզբունքներով: Հետևաբար, ֆինանսական վերահսկողությունն իր առջև խնդիր է դնում ոչ միայն գնահատելու հանրային ֆինանսավորման նպատակային ծախսերը բուհերում, այլև դրանց արդյունավետ օգտագործման արդյունքների ներկայացումը բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների շահառուներին՝ պետությանը, համալսարանների վարչակազմին, ուսանողությանը, գործատուներին:

Այս նկատառումներով պայմանավորված՝ բուհերում պարբերաբար վերանայվում է ֆինանսական վերահսկողության գործառույթների շրջանակը: Եթե ոչ վաղ անցյալում վերահսկողության հիմնական գործառույթը բուհի ֆինանսական ռեսուրսների ժամանակին հավաքագրման և ըստ նպատակայնության ծախսման մշտադիտարկումն էր՝ կանխարգելելու հնարավոր չարաշահումներն ու դրամական միջոցների անարդյունավետ օգտագործումը, ապա ներկայումս կարևորվում են նաև ֆինանսական վերահսկողության վերլուծական գործառույթները:

Մասնավորապես, ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության ոլորտում վերանայումների կարիք է զգացվում ակադեմիական կրեդիտների կուտակման և հատկապես դրանց փոխանցումներից բխող ֆինանսատնտեսական արդյունքերի գնահատան մոտեցումները: Եթե մինչ այժմ ակադեմիական կրեդիտները վերահսկողության տեսանկյունից դիտարկվում էին որպես ուսումնառության ծանրաբեռնվածության գնահատման միջոց, ապա շարժունության ներկա պայմաններում, ուսանողի՝ սովորելու ընթացքում բուհից բուհ տեղափոխվելը կրթական ծառայությունների ֆինանսավորման հիմնախնդիր է առաջացնում համալսարաններում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կազմակերպություններում ֆինանսական վերահսկողությունն արդյունավետ է օգտագործվում հատկապես այն դեպքում, երբ իրականացվում է ըստ պատասխանատվության կենտրոնների բյուջետավորում: Սակայն, դրան զուգահեռ, պետք է արձանագրել, որ ՀՀ բուհերում բյուջետավորումն իրականացվում է «կաթսայական եղանակով», այսինքն ծախսային և եկամտային նախահաշիվները սահմանվում են համաբուհական կտրվածքով և չեն ներկայացվում ըստ առանձին պատասխանատու գիտակրթական գործունեություն ծավալող ստորաբաժանումների: Դա էլ իր հերթին իջեցնում է ֆինանսական հաշվետվողականության աստիճանը, ինչպես նաև բուհերում վերահսկողության համար անբարենպաստ շեղումների արձանագրման, բացահայտման և կանխար-

գելման խոչընդոտներ ստեղծում՝ ըստ առանձին գիտակրթական պատասխանատվության կենտրոնների: Ուստի, արդիական է համարվում պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողության կազմակերպումը բուհերում ու, դրան զուգահեռ, ֆինանսական նախահաշիվների հաշվետվողականության արդյունավետ համակարգի ներդրումը:

Բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության համակարգերի և ֆինանսական կառավարման տեսամեթոդաբանական հիմնախնդիրների քննարկումներն իրենց մեկնաբանություններն են ստացել ինչպես հայազգի (Ավալյան Գ., Բարխուդարյան Գ., Ճուղուրյան Ա.), այնպես էլ արտասահմանցի հեղինակների կողմից (Գրին Ա., Կոնդրաշովա Տ., Տուլում Մ. և այլոք): Սակայն, տվյալ ոլորտի բարելավմանն ուղղված վերոնշյալ հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության համակարգում, ինչն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ՀՀ բուհերում գործող ֆինանսական վերահսկողության մեխանիզմները՝ վերհանելով դրանց բարելավման ուղիները:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել համալսարանների ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը և ներկայացնել ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- դրամական միջոցների փաստացի ձևավորման չափերի և դրանց առնչվող սահմանված նպատակադրումների իրագործելիության փաստացի արդյունքների համադրումներով մշակել ֆինանսական ռեսուրսների ձևավորման ներքին վերահսկողության գնահատման համակարգ,
- ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկել ֆինանսական վերահսկողության տեսանկյունից՝ առաջարկելով կրեդիտների շարժունության դրամային փոխակերպման համակարգ,
- մշակել ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենապաստ ֆինանսական շեղումների բացահայտման և կառավարչական հաշվառման տեղեկատվական համակարգ,
- անընդհատության սկզբունքով ներկայացնել ներբուհական ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում՝ նպատակ ունենալով կանխարգելելու բուհի ֆինանսական ռիսկերի ձևավորումը՝ ըստ գիտակրթական գործունեության պատասխանատվության կենտրոնների,
- մշակել ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման համակարգ և ներկայացնել բուհի ստորաբաժանումներում

ֆինանսական վերահսկողության թույլ և ուժեղ կողմերի բացահայտման մեթոդաբանություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսական համակարգն ու ֆինանսական վերահսկողության գործառույթների շրջանակը: Հետազոտության առարկան ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության գործընթացն է՝ իրեն հատուկ մեթոդաբանական առանձնահատկությունների կտրվածքով:

Հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալ հիմնական դրույթներում.

1. ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկելով ֆինանսական վերահսկողության կտրվածքով՝ առաջարկվել է կրեդիտների արժեքային փոխակերպման համակարգ՝ ուսանող/ակադեմիական կրեդիտի հենքով ներկայացնելով հաշվարկային դրամական ներհոսքեր և արտահոսքեր,
2. դրամական միջոցների ձևավորման և դրանց առնչվող սահմանված նպատակադրումների իրագործելիության փաստացի արդյունքների համադրումներով առաջարկվել է ֆինանսական ռեսուրսների օգտագործման վերահսկողության գործակցային շեղումների գնահատման համակարգ՝ ներքին վերահսկողության գործառույթների շրջանակում մշտադիտարկմանը զուգահեռ կիրառելով նաև վերլուծական գնահատումներ,
3. առաջարկվել է ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ դրամական շեղումների բացահայտման հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ՝ ինարավորություն ստեղծելով բուհերում իրականացնելու ներկառավարչական հաշվետվողականության կազմակերպում և, դրանով իսկ անընդհատության սկզբունքով կանխարգելելու ֆինանսական ռիսկերի ձևավորումը,
4. մշակվել է ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման համակարգ, որով բուհի առանձին ստորաբաժանումներում իրականացվող ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը դիտարկվում է կազմակերպչական տեսանկյունից՝ շեշտադրելով վերահսկողական կանխարգելիչ, կարգավորիչ և վերլուծական գործառույթները:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է բարձրագույն մասնագիտական կրթության ծառայությունների ֆինանսական վերահսկողության մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերա-

հսկողական նպատակադրումների և կազմակերպչական գործառույթների բարելավմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով բուհերում իրականացվող ֆինանսական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև համալսարանների ֆինանսական ռեսուրսների օգտագործման մշտադիտարկման բարելավմանն ու նրանց կողմից իրականացվող կառավարչական որոշումների ընդունման կատարելագործմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրատարակումները: Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ իրականացվել են մի շարք աշխատանքային քննարկումներ տնտեսագետ-տեսաբանների, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության փորձագետների, բուհերի ֆինանսատնտեսական ստորաբաժանումների ղեկավարների հետ, ինչպես նաև կատարված հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության Հյուսիսային համալսարանի «Տնտեսագիտության և կառավարման» ամբիոնում, «Մրցունակ կրթության և գիտության մարտահրավերները հարափոփոխ աշխարհում» միջազգային գիտաժողովում (2021 թ.):

Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթներն իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի կողմից հրատարակած գիտական 7 հոդվածներում:

Ատենախոսության կառուցածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժիններից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Ատենախոսության գծապատկերները թվով 23-ն են, աղյուսակները՝ 18-ը, իսկ տեքստը շարադրված է 120 էջի սահմաններում՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ինչպես նաև ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտա-գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«Ֆինանսական համակարգի գործունեության առանձնահատկությունները համալսարաններում»**, քննարկվել են ֆինանսական վերահսկողության գործառույթների բարելավման հիմնախնդիրները ՀՀ բուհական համակարգում:

Միջազգային կրթական շուկայում համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուհական համակարգի գործունեության ֆինանսավորման առավել մեծ չափաբաժինը կրթավճարներն են (տե՛ս գծապատկեր 1): Այս առումով, արդիական է համարվում գիտակրթական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրների ոչ միայն դիվերսիֆիկացման շրջանակի ընդլայնումը, այլև ֆինանսական ռեսուրսների ձևավորման նպատակադրումների հասանելիության որոշումը: Ուստի, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ձևավորման վերահսկողության նպատակով կարևորվում է գործակցային շեղումների գնահատման մոտեցման կիրառումը, երբ տնօրինվող դրամական միջոցների փաստացի ձևավորման չափերը հարաբերվում են սահմանված նպատակադրումներին՝ դրանով իսկ բացահայտելով դրամական պաշարների ձևավորման թույլ կողմերը:

Այս առումով, նպատակահարմար է դառնում ֆինանսական ռեսուրսների ձևավորման և ֆինանսական ռեսուրսների օգտագործման ուղղություններով գործակցային շեղումների միջինացված ցուցանիշների ուսումնասիրումը: Հաջորդիվ հաշվարկվում են շեղման միջին ցուցանիշները և ստացված արդյունքներն արտացոլվում են շեղումների միջակայքում, որն առավել տեսանելի է դարձնում ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման ուղղություններով շեղումների ցուցադրումը:

Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործակցային գնահատումների միջոցով համալսարաններում կազմակերպվող ֆինանսական վերահսկողության ծանրության կենտրոնը մշտադիտարկման գործընթացից տեղափոխվում է գնահատումների և որոշումների կայացման ոլորտ՝ ակտիվացնելով ֆինանսական վերահսկողության կարգավորիչ, կանխարգելիչ և վերլուծական գործառույթները:



Գծապատկեր 1. Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը տարբեր երկրներում (%)[1]

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության շրջանակը բուհերում»**, վերլուծվում են ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները:

Որպես կանոն, կրեդիտներն իրենց ակադեմիական նշանակությամբ են կիրառվում: Սակայն, եթե ուսման վարձերը սահմանվում են ոչ թե կիսամյակային հենքով, այլ ուսանողի կողմից պատվիրված առարկաների հաշվով, ապա հնարավորություն է ստեղծվում ակադեմիական կրեդիտներին վերագրելու նաև դրամային չափելիություն: Եթե բուհերը հաշվարկում են, թե դրամային արժեքով ինչ արժե

[1] Education at a Glance, How much public and private investment in educational institutions is there?, OECD, 2020, pp. 296-306

միավոր ակադեմիական կրեդիտը, ապա այդ հիմքով հնարավորություն է ստեղծվում չափելի դարձնելու կրթական գործընթացում դրամական ներհոսքերն ու արտահոսքերը: Հետևաբար, առաջարկվում է ֆինանսական վերահսկողության տիրույթում ներառել ակադեմիական կրեդիտ/ուսանող ցուցանիշը, որը հաշվարկվում է ուսումնառության ընթացքում ինչպես ընդունած, այնպես էլ փոխանցած կրեդիտների գծով: Եվ եթե կրեդիտ/ուսանող ցուցանիշը բազմապատկվում է բուհերի կողմից հաշվարկված միավոր կրեդիտի արժեքով, ապա ակադեմիական ծանրաբեռնվածության ցուցանիշը վերածվում է դրամական ցուցանիշի և հիմք է հանդիսանում բուհի ֆինանսական արտահոսքերի և ներհոսքերի գնահատումների համար:

Ատենախոսությունում առաջարկվում է ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացում ֆինանսական վերահսկողությունն իրականացնել երեք փուլով (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՄԿԾ-ների իրականացման ֆինանսական վերահսկողության փուլերն ակադեմիական կրեդիտների հանդիպակաց փոխանցումների պարագայում[2]

1. Առաջին փուլում մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ) ենթարկվում են մշտադիտարկման՝ համալսարանի կողմից ընդունած և այլ բուհեր փոխանցած ակադեմիական կրեդիտների տեսանկյունից:

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից կատարված հետազոտության և դատողությունների հիման վրա:

2. Երկրորդ փուլում իրականացվում է ՄԿԾ-ն իրագործելու ֆինանսական պաշարի գնահատման հաշվարկ՝ ընդունած և փոխանցած ուսանող-դրամական կրեդիտի ներհոսքերի և արտահոսքերի հաշվարկով:

3. Երրորդ փուլում տրվում է ակադեմիական կրեդիտների փոխանցման գնահատում՝ դրամական պաշարների ձևավորման կայունության ապահովման և բուհի ֆինանսական մրցունակության տեսանկյունից:

Պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողություն կազմակերպելիս առաջնահերթորեն կատարվում է բուհում նախատեսվող ծախսերի և ակնկալվող եկամուտների բյուջետավորում՝ ըստ ծախսերի ձևավորման և ֆինանսական արդյունքների ստացման կենտրոնների: Ընդ որում, առաջին խմբում հանդես են գալիս մասնագիտական թողարկող ամբիոնները, հետազոտության արդյունքներ առևտրայնացնող գիտահետազոտական ստորաբաժանումները, իսկ երկրորդ խմբով՝ սպասարկող ամբիոնները, վարչատնտեսական ստորաբաժանումները, կրթական ծառայությունները սպասարկող օժանդակ օղակները:

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«Ֆինանսական վերահսկողության կազմակերպման կատարելագործման ուղիները բուհերում»,** քննարկվում է ըստ պատասխանատվության կենտրոնների վերահսկողության մեխանիզմների ներդրման շրջանակը:

Համալսարանների գիտաուսումնական ստորաբաժանումների գործունեության ֆինանսական արդյունքների տեղեկատվական հոսքերի գծով շեղումների հաշվառման համար առաջարկվել են նոր կառավարչական հաշիվներ և հաշվային թղթակցություններ (տե՛ս գծապատկեր 3): Հիմնվելով պատասխանատվության կենտրոններով բուհի ֆինանսական արդյունքների բյուջետավորման կառուցակարգի վրա՝ առաջարկվել է ներկառավարչական հաշվետվողականության ձևավորման այնպիսի համակարգ, որը թույլ է տալիս որոշել, թե համալսարանական որ ստորաբաժանումներում են ձևավորվել գիտակրթական ծառայությունների իրականացման նախահաշիվներից շեղումներ, և ովքեր են դրանց պատասխանատուները:

Յուրաքանչյուր պատասխանատվության կենտրոնի գծով տարեկան նախահաշիվներ կազմելով՝ հնարավորություն է ստեղծվում կիրառելու ֆինանսական վերահսկողության որակի գնահատման 1-ից 5 բալային համակարգ, որը թույլ է տալիս պարզելու, թե ինչպես են օգտագործվում վերահսկողության առանցքային գործառույթները պատասխանատվության տարբեր կենտրոններում: Այս առումով, առաջարկվում է կիրառել ֆինանսական վերահսկողության գործառույթների որակի գնահատման համակարգ՝ օգտագործելով լավագույն ցուցանիշներից շեղումների հեռավորության վերլուծության մոտեցումը:



Գծապատկեր 3. Ֆինանսական արդյունքների գծով շեղումների տեղեկատվական հոսքերի ներկայացումը կառավարչական հաշվառման առաջարկվող հաշիվներով[3]

[3] Գծապատկերը կազմված է ատենախոսի կողմից:

Ընդ որում, վերահսկողության կանխարգելիչ գործառույթներից առաջնային են համարվել նախահաշիվների կազմումը, շեղումների բացահայտումն ու արձանագրումը: Կարգավորիչ գործառույթներից կարևոր են համարվել ֆինանսական պատասխանատվության կենտրոնների ձևավորումը և համապատասխան ներբուհական հաշվետվողական համակարգի կիրառումը: Վերլուծական գործառույթների շրջանակը ներառել է ձևավորված շեղումների պատճառահետևանքային կապերի գնահատումը և դրանց հիման վրա որոշումների կայացումը:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները.

1 ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի զարգացման միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում համալսարանական ակտիվ գործունեության առկայությունը և բարձրագույն կրթություն ստացողների բարձր տեսակարար կշիռը հանգեցրել է բուհերում պատրաստվող մասնագետների առաջարկի և աշխատաշուկայում դրա պահանջարկի անհապատասխանության:

2 Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման հիման վրա կարելի է եզրահանգել, որ ՀՀ բուհական համակարգում դեռևս առկա են չիրացված հնարավորություններ: Հայաստանի Հանրապետությունը պետք է ուղիներ որոնի բարձրագույն մասնագիտական կրթության դիվերսիֆիկացված ֆինանսավորման աղբյուրների օպտիմալացման համար: Միջազգային բուհերն իրենց հեռահար և ծախսատար գիտակրթական ծրագրերն իրականացնելիս ձևավորում են հանրային ֆոնդեր, իրականացնում են երկարաժամկետ դրամաշնորհային ծրագրեր, իսկ կարճաժամկետ նպատակադրումների իրագործման համար հիմնականում օգտվում են պետական բյուջեի ֆինանսավորումից և մասնավոր կրթավճարներից: Հետևաբար, ՀՀ բուհական համակարգը, որը ներկայումս ձևավորում է ֆինանսական պաշարներ հիմնականում կարճաժամկետ գիտակրթական ծրագրերի իրականացման համար, պետք է փոխառնի նպատակային հանրային կապիտալի ձևավորման և օգտագործման միջազգային առաջավոր փորձը, որպեսզի կարողանա արտահամալսարանական միջոցներով իրագործել հեռահար ծախսատար ծրագրեր:

3 Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆինանսական վերահսկողության գործառույթները ՀՀ բուհական համակարգում բարելավման կարիք ունեն հետևյալ ուղղություններով.

- ֆինանսական վերահսկողությունը կազմակերպել ոչ միայն նախահաշիվներից ծախսային շեղումների բացահայտումով, այլև այդ ռեսուրսների ծախսերի սպասելի հատույցների գնահատումով, որի համար անհրաժեշտ է իրականացնել ֆինանսական ռեսուրսների ծախսային ծրագրային բյուջետավորում,

- ֆինանսական վերահսկողությունը կազմակերպել առավելապես շեղումների բացահայտումները վերհանող գործառույթներով՝ հիմնված պատասխանատվության կենտրոնների վրա, որոնց համար նպատակահարմար է ֆինանսական ռեսուրսների ձևավորումն ու ծախսերի նախահաշիվների կազմումն իրականացնել ոչ թե համաբուհական (ընդհանրական), այլ ըստ բուհի առանձին ստորաբաժանումների (պատասխանատվության կենտրոնների) կտրվածքի,
- ֆինանսական վերահսկողության գործընթացում ընդլայնել վերլուծական մասը, որը ենթադրում է ոչ միայն ծախսային շեղումների և ֆինանսավորման բացթողումների ներկայացում, այլև դրանց ձևավորման պատճառահետևանքային գործոնների վերլուծություն, որը կարևորագույն տեղեկատվություն է տրամադրում բուհի վարչակազմի կողմից համալսարանական գործունեության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման ուղղությամբ կառավարչական որոշումների կայացման համար:

4 Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության իրականացման գծով առաջարկվել է նոր մոտեցում՝ իրականացնելով բուհում՝ ըստ առանձին գործունեության ոլորտների դրամական միջոցների հավաքագրումների և ծախսերի համադրումներ ոչ թե բացարձակ, այլ գործակցային մեծությունների հենքով: Մշակվել են ֆինանսական պաշարների կուտակման և օգտագործման թույլ կողմերի բացահայտման մոտեցումներ: Նաև, առաջարկվող վերահսկողության մոտեցումներն առավելապես շեշտադրումներ են կատարում վերլուծական եզրահանգումների վրա՝ արձանագրելով բուհի ֆինանսական գործունեության թույլ կողմերը ոչ միայն ըստ դրամական ներհոսքերի և արտահոսքերի առանձին ուղղությունների, այլև պատասխանատվության կենտրոնների:

5 Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկվել է ֆինանսական վերահսկողության կտրվածքով, երբ մասնագիտական կրթական ծրագրերը ենթարկվում են ֆինանսական մշտադիտարկման՝ համալսարանի կողմից ընդունած և այլ բուհեր փոխանցած ակադեմիական կրեդիտների տեսանկյունից: Այս դեպքում տրվում է ակադեմիական կրեդիտների շարժունության գնահատում՝ դրամական պաշարների ձևավորման կայունության ապահովման և բուհի ֆինանսական մրցունակության տեսանկյունից:

Ակադեմիական կրեդիտների հանդիպակաց փոխանցումների ֆինանսական վերահսկողության առաջարկվող մոտեցումները թույլ են տալիս ակադեմիական կրեդիտները փոխակերպելով արժեքային տեսքի՝ վերջիններս կիրառել որպես յուրօրինակ հաշվարկային դրամական ներհոսքեր և արտահոսքեր բուհի գործունեության ֆինանսական կայունությունը որոշելիս: Ինչպես նաև օպտիմալացնել կրթական ծառայությունների մատուցման ծախսերն ակադեմիական կրեդիտների շարժունության պարագայում՝ հիմնվելով ընդունած և փոխանցած

ուսանող-դրամական կրեդիտ չափաբաժինների գծով ընդունած վերահսկողական սահմանափակումների վրա:

6 ՀՀ բուհերում արտաքին աուդիտ իրականացնելիս հիմնականում շեշտադրում է կատարվում միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների կազմման համապատասխանատվության վրա՝ առավել նվազ ուշադրություն դարձնելով ֆինանսական հոսքերի նպատակայնության, արդյունավետ օգտագործման ոլորտների վրա: Հետևաբար, որպես ֆինանսական վերահսկողության բարելավման ուղի է համարվում ներքին աուդիտի աջակցությամբ բուհերում ըստ պատասխանատվության կենտրոնների անբարենպաստ շեղումների հայտնաբերման և արձանագրման տեղեկատվական հոսքերի ներկայացումը, որոնք ձևավորվում են ոչ թե որոշակի պարբերականության, այլ անընդհատության սկզբունքով: Նման պարագայում, հնարավորություն է ստեղծվում բուհերում իրականացնելու օպերատիվության հենքով ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում, և, դրանով իսկ, ժամանակին բացահայտելու գիտակրթական գործունեության ծառայությունների մատուցման ֆինանսական շղթայի թույլ օղակներն ու հրատապ միջոցներ ձեռնարկելու դրանց վերացման ուղղությամբ:

7 Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուհերում դեռևս կիրառվում է ֆինանսական վերահսկողության «կաթսայական մոտեցում»-ը, երբ ֆինանսական հոսքերը մշտադիտարկվում են համընդհանուր կտրվածքով: Դրան զուգահեռ, առաջարկվում է պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողության կազմակերպում, որը բուհերում հնարավորություն է ստեղծում իրականացնելու արդյունավետ կառավարչական որոշումների իրականացման մի շարք ուղղություններ: Առաջին, համալսարանական կառավարման համակարգը ներկայացվում է ֆինանսական պատասխանատվության կենտրոններով, որը թույլ է տալիս ոչ միայն օպերատիվ բացահայտելու վերջիններից յուրաքանչյուրի գործունեության անբարենպաստ արդյունքները, այլև վերհանելու դրանց պատճառներն ու մեղավորներին, որն էականորեն բարձրացնում է իրականացվող ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը: Երկրորդ, բուհի կառուցվածքը դիտարկելով ըստ առանձին պատասխանատվության կենտրոնների՝ ներքին վերահսկողությանը հնարավորություն է ընձեռնվում կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու ֆինանսական ռեսուրսների անարդյունավետ բաշխման և օգտագործման ուղղությամբ, քանի որ այս պարագայում հստակ նախորոշվում են բուհի ֆինանսատնտեսական գործունեության շղթայի թույլ օղակները:

8 Առաջարկվել է ֆինանսական վերահսկողության հաշվետվողականության նոր մոտեցում՝ հիմնված շեղումների հաշվապահական հաշվառման մեթոդաբանության կիրառման վրա: Այդ նպատակով ներկայացվել են նոր հաշվապահական հաշիվներ ու թղթակցություններ, որոնք, անընդհատության սկզբունքով, տեղեկատվական հոսքեր են ապահովում բուհերում իրականացվող ֆինանսական

վերահսկողությանը և հիմքեր են ստեղծում ներկառավարչական հաշվետվությունների կազմման համար: Նման հաշվետվություններով ֆինանսական վերահսկողությունը հնարավորություն է ունենում առավել ընդգրկուն կիրառելու իր գործառույթները, ինչպիսիք են.

- ձևավորվող բարենպաստ և անբարենպաստ շեղումների մշտադիտարկման իրականացում, երբ շեղումներում տեղեկատվությունն արձանագրվում է անընդհատության սկզբունքով, քանի որ շեղումների առաջարկվող հաշիվները գործում են ֆինանսական հաշվառման համակարգում,
- պատասխանատվության կենտրոնների գործունեության ֆինանսական վերլուծության իրականացում, երբ մեկնաբանվում են բացահայտված շեղումների պատճառահետևանքային կապերը և վերանայվում են դրանց գծով բուհում սահմանված պատասխանատվության շրջանակները,
- ֆինանսական պատասխանատվության կենտրոնների միջև շահերի բախումների հարթեցում, երբ մեկ այլ կենտրոնից փոխանցված անբարենպաստ շեղումները ներբուհական վերահսկողության կողմից չեն վերագրվում ընդունող կենտրոնին,
- ֆինանսական շեղումների կանխարգելիչ միջոցառումների իրականացում, երբ վերլուծական արդյունքների հիման վրա բուհում առաջարկություններ են արվում գիտակրթական գործունեության շղթայի թույլ օղակների վերանայման և բացասական ֆինանսական ռիսկերի կանխարգելման ուղղությամբ:

9 Առաջարկվել է բուհերում ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման մոտեցում, որը հնարավորություն է ընձեռնում.

- առաջին, ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը դիտարկելու ոչ միայն ռեսուրսահատույցի և տնտեսական նպատակահարմարության, այլև վերահսկողության կազմակերպման տեսանկյունից՝ գնահատելով կանխարգելիչ, կարգավորիչ և վերլուծական գործառույթների որակը:
- երկրորդ, ներկայացնելու բուհի պատասխանատվության կենտրոններում իրականացվող ֆինանսական ներքին վերահսկողության որակի գնահատման վարկանիշային սանդղակ, որով բացահայտվում են ֆինանսատնտեսական վերհսկողության կազմակերպման ուժեղ և թույլ կողմերը բուհի առանձին ստորաբաժանումներում:
- երրորդ, իրականացնելու հասցեական կառավարչական որոշումներ, ուղղված կոնկրետ ստորաբաժանման գործունեության շրջանակում կազմակերպվող ֆինանսական վերահսկողության բարելավումներին:

Ներկայացված գիտագործնական եզրակացություններն ու կատարված առաջարկությունները հնարավորություն են ստեղծում բարելավելու ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողությունը և, դրանով իսկ, նպաստելու ֆինան-

ական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված կառավարչական ողջամիտ որոշումների կայացմանը:

Ատենախոսության առանցքային դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Poghosyan A., Ways to improve financial internal control in RA universities, “Finance and accounting” scientific journal, Yerevan, 2020, 2 (6), pp. 162-167.
2. Պողոսյան Ա., Նորմատիվային հաշվառման և կրթական ծառայությունների ծախսերի վերահսկողության փոխառնչությունները համալսարաններում, «Պատմություն և քաղաքագիտություն» գիտական հանդես, Երևան, 2020, 5 (10), էջ 121-125:
3. Poghosyan A., Control of educational tuition fees formation in universities, Finance and accounting scientific journal, Yerevan, 2021, 1 (7), pp. 91-97.
4. Poghosyan A., Issues of financial control information provision in universities, “Finance and accounting” scientific journal, Yerevan, 2021, 2 (8), pp. 125-132.
5. Պողոսյան Ա., Պատասխանատվության կենտրոններով վերահսկողության կազմակերպումը բուհերում, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Երևան, 2021, 5 (16), էջ 135-139:
6. Poghosyan A., Issues of development a financial system of higher professional education in RA, “Finance and accounting” scientific journal, 2022, 1 (9), pp. 115-122.
7. Պողոսյան Ա., Մրցունակ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի զարգացման միտումները ՀՀ-ում, «Մրցունակ կրթության և գիտության մարտահրավերները հարափոփոխ աշխարհում» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2022, էջ 306-312:

АСТХИК ГЕВОРГОВНА ПОГОСЯН

ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОГО КОНТРОЛЯ В ВУЗАХ РА

Автореферат диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится 15 декабря 2022 г. в 14:00 часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования. Целью диссертации является внесение предложений по улучшению финансового контроля в вузах Республики Армении.

Исходя из цели исследования, были предложены следующие задачи:

- изучить передовой международный опыт финансирования университетов и представить возможности диверсификации источников финансирования высшего профессионального образования в РА;
- разработать систему оценки внутреннего контроля за формированием финансовых ресурсов путем объединения фактических результатов фактического формирования средств и реализуемости поставленных задач, связанных с ними;
- рассмотреть процесс накопления и перевода академических кредитов с точки зрения финансового контроля, предложив драмовую систему конвертации кредитной мобильности;
- разработать информационную систему выявления неблагоприятных финансовых отклонений научно-образовательной деятельности и управленческого учета по центрам ответственности;
- по центрам ответственности за научную и образовательную деятельность представить на постоянной основе организацию внутривузовской

финансовой отчетности, в целях предотвращения формирования финансовых рисков вуза;

- разработать рейтинговую систему оценки качества внутреннего финансового контроля и представить методику выявления слабых и сильных сторон финансового контроля в подразделениях вуза.

Научная новизна диссертации. Научная новизна исследования заключается в представление предложений по совершенствованию финансового контроля в вузах Республики Армении. В частности:

- рассматривая процесс накопления и перевода академических кредитов с точки зрения финансового контроля, была предложена система стоимостного преобразования кредитов, представляющая расчетные притоки и оттоки денежных средств на основе студенческих/академических кредитов;
- путем сопоставления фактических результатов формирования средств и реализуемости поставленных целей, связанных с ними, предложена система оценки коэффициентов отклонений контроля использования финансовых ресурсов, применяющая аналитические оценки параллельно с мониторингом в рамках рамки функций внутреннего контроля;
- предложена учетно-информационная система выявления неблагоприятных финансовых отклонений научной и образовательной деятельности по центрам ответственности, создающая возможность организовать внутриуправленческую отчетность в вузах и тем самым предотвратить формирование финансовых рисков на постоянной основе;
- разработана система рейтинговой оценки качества внутреннего финансового контроля, по которой эффективность финансового контроля, осуществляемого в отдельных подразделениях вуза, рассматривается с организационной точки зрения с выделением превентивной, регулирующей и аналитической функций контроля.

ASTGHIK GEVORG POGHOSYAN

THE PROBLEMS OF FINANCIAL CONTROL AT THE RA UNIVERSITIES

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – "Finance, Accounting''.

The defense of the thesis will take place at 14:00 on the 15th of December 2022 at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str, 0025, Yerevan, RA.

ABSTRACT

The Purpose and Objectives of the Research: The aim of the dissertation is to make suggestions for improving financial control at the RA universities.

Based on the purpose of the research, the following issues have been raised:

- study international best practices in financing universities and present opportunities for diversifying funding sources for higher professional education in the Republic of Armenia,
- develop a system for evaluating internal control over the formation of financial resources by combining the actual results of the actual formation of funds and the feasibility of the tasks associated with them,
- consider the process of accumulating and transferring academic loans from the point of view of financial control by proposing an AMD system for converting credit mobility,

- develop an information system for identifying unfavourable financial deviations in scientific and educational activities and management accounting by responsibility centres,
- on the principle of continuity, present the organization of intra-university financial accountability, with the aim of preventing the formation of financial risks of the university, according to the centers of responsibility for scientific and educational activities,
- develop a rating system for assessing the quality of internal financial control and present a methodology for identifying the strengths and weaknesses of financial control in the departments of the university.

The Main Research Results and Scientific Novelty of the Dissertation Thesis: The scientific novelty of the research is the presentation of proposals on improving financial control at the RA universities. In particular:

- considering the process of accumulation and transfer of academic credits from the point of view of financial control, a value conversion system of credits was proposed, presenting calculated cash inflows and outflows based on student/academic credit,
- based on the actual results of the formation of funds and the feasibility of the defined goals related to them, a system for evaluating the coefficient deviations of the control of the use of financial resources was proposed, applying analytical evaluations in parallel with the monitoring within the framework of the internal control functions,
- an accounting information system for identifying adverse financial deviations of scientific and educational activities according to responsibility centers was proposed, creating an opportunity to organize intra-managerial accountability in universities and, thereby, to prevent the formation of financial risks on a continuous basis,

- a rating system for the quality of internal financial control was developed, by which the effectiveness of financial control implemented in individual departments of the university is considered from an organizational point of view, emphasizing the preventive, regulatory and analytical functions of control.